Նախագծային աշխատանք

Հասարակագիտություն առարկայից

Գեղեցկության իդեալի դրսևորումները համաշխարհային և ազգային կերպարվեստի վարպետների գործերում

Լեոնարդո Դա Վինչի

Լեոնարդոն ծնվել է 1452 թվականի ապրիլի 15-ին (հուլյան օրացույցով) գիշերվա ժամը 3-ին[Ն 1] Տոսկանայի լեռնային Վինչի քաղաքում՝ Առնո գետի ստորին հովտում՝ Ֆլորենցիայի հանրապետությունում: Ինչպես նշում է Անջելա Օտտինո դելա Կիեզան, նրա ծնունդը գրանցվել է Լեոնարդոյի հայրական պապի՝ Սեր Անտոնիոյի օրագրում[25]: Նա մեծահարուստ ֆլորենտացի նոտար Մեսեր Պիերո Ֆրուոզինո դի Անտոնիո դա Վինչիի և գյուղացի Կատերինայի արտամուսնական որդին էր[24][25]: Ենթադրվում է, որ Կատերինան կարող էր լինել Միջին Ասիայից կամ Միջերկրածովյան ավազանից բերված ստրկուհի: Ըստ Վինչիում Լեոնարդո դա Վինչիի թանգարանի տնօրեն Ալեսանդրո Վեզոսիի՝ ապացույցներ կան, որ Պիերոն ուներ Կատերինա անունով միջինասիացի ստրկուհի: Ըստ լուրերի, Լեոնարդոյի մատնահետքի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նա ունի միջինասիացու արյուն[26]: Հոդվածում որպես ապացույց նշվում է, որ միջինասիական ծագում ունեցող մարդկանց 60 %-ը Լեոնարդոյի վերստեղծված մատնահետքի հետ ունի պտույտների ընդհանրություն: Հոդվածը նաև նշում է, որ ոմանք դեմ են այս պնդմանը, քանի որ նրանց կարծիքով այսպես հնարավոր չէ գուշակել մարդու ռասան, առավել ևս, երբ միայն մեկ մատի մատնահետքն է հաշվի առնվել[27]: Լեոնարդոն ազգանուն չուներ, դա Վինչին պարզապես նշանակում է Վինչիից: Նրա ամբողջական անունն էր *Լիոնարդո դի սեր Պիերո դա Վինչի*, որը նշանակում է Լեոնարդո՝ Վինչիի մեսսեր Պիերոյի որդի: Սեր (մեսսեր) նշանակում էր, որ Լեոնարդոյի հայրը ազնվական էր:

Մինաս Ավետիսյան

Մինաս Ավետիսյան Բեյը ծնվել է 1849 թվականի փետրվարի 3-ին, Կոստանդնուպոլսի Բերա թաղամասում: Նախնական ուսումն ստացել է Կ. Պոլսի Նարեկյան կրթարանում, որի բարձրագույն կարգն ավարտելուց հետո վարժարանի հոգաբարձու Հապեթիկ Նևրուզյանի միջոցով և պաշտպանությամբ ընդունվել է Կ. Պոլսի զինվորական իդադիե (միջնակարգ) վարժարանը: 1870-1874 թվականներին սովորել է Իդադիե վարժարանի անասնաբուժական բաժնում և զինվորական անասնաբույժի վկայական ստացել:

Վինսենթ Ուիլլեմ Վան Գոգ



Վինսենթ Ուիլլեմ վան Գոգը ծնվել է 1853 թվականի մարտի 30-ին հոլանդական Զունդերտ գյուղում բնակվող հոգևոր հովվի ընտանիքում[21]: Վինսենթը Թեոդոր Վան Գոգի և Աննա Կոռնելիա Կարբենտուսի չմահացած երեխաներից ավագն էր: Երեխային տրվել էր նրա պապի և իր ծնվելուց մեկ տարի առաջ մահացած եղբոր անունը[Ն 1]: *Վինսենթ* անունը շատ տարածված է եղել այս ընտանիքում. այս անունն է ունեցել նկարչի պապ Վինսենթը (1789-1874), որը 1811 թվականին ավարտել է Լեյդենի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետը: Նա ունեցել է վեց երեխա, որոնցից երեքը զբաղվել են արվեստի գործերի վաճառքով: Հնարավոր է, այս Վինսենթը ևս անվանակոչվել է իր քանդակագործ պապի պատվին (1729-1802):

Մարտիրոս Սարյան



Մարտիրոս Սարյանը (1880-1972 թթ.) ծնվել է Նոր Նախիջևանում: Սարյանի նախնիները եղել են անեցիներ և գաղթելով Ղրիմ՝ մասնակցել են տեղի հայկական գաղթավայրի ձևավորմանը: 1895թ. Սարյանը ավարտել է տեղի հանրակրթական ուսումնարանը, 1897-1904թթ. սովորել է Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանի գեղանկարչություն բաժնում: Առաջին անգամ Երևանում, Աշտարակում, Վաղարշապատում եղել է 1901թ., իսկ 1902թ.՝ Անիում: Ճամփորդության ընթացքում ուսումնասիրել է հայոց պատմությունը, մշակույթը, որը վճռական ազդեցություն է ունեցել նրա աշխարհայացքի և ստեղծագործական ներաշխարհի ձևավորման վրա:

Հովհաննես Այվազովսկի

Հովհաննես Այվազովսկին ծնվել է Կոստանդին (Գևորգ) և Հռիփսիմե Այվազովսկիների ընտանիքում 1817 թվականի հուլիսի 17 (հին տոմարով՝ հուլիսի 29)-ին: Թեոդոսիայի հայոց եկեղեցու քահանան գրանցել է, որ ծնվեց «Յովհաննէսը՝ Գէորգ Այվազեանի որդին»: Այվազովսկու նախնիները Գալիցիայի հայերից էին, որոնք XVII դարում Գալիցիա էին գաղթել Արևմտյան Հայաստանից: Հայտնի է, որ նրա ազգականները Լվովի շրջակայքում մեծ հողակտորների սեփականատերեր են եղել: Այդուհանդերձ, Այվազովսկու ծագումն առավել ճշգրիտ արձանագրած որևէ փաստաթուղթ չի պահպանվել: Նրա հայրը Թեոդոսիա տեղափոխվելուց հետո էլ իր ազգանունը շարունակել է գրել լեհականացված ձևով՝ «Գայվազովսկի»: Ինքը՝ Այվազովսկին, ինքնակենսագրության մեջ հոր մասին գրում է, որ նա իր եղբայրների հետ վեճի պատճառով դեռ պատանեկության տարիներին Գալիցիայից տեղափոխվել է Դանուբյան իշխանություններ (Մոլդովա, Վալախիա), որտեղ զբաղվել է առևտրով: Այդտեղից էլ հետագայում տեղափոխվել է Թեոդոսիա: Գևորգ կամ Կոնստանդին Հայվազովսկին մի քանի լեզու է իմացել, այդ թվում՝ հայերեն, թուրքերեն, լեհերեն, ռումիներեն, գնչուերեն:

Այժմ կցուցադրենք մեր աշխատանքները



Շնորհակալություն